132. Պատառիկ (Fragment) Տ. Խաչիկ ծ. վարդապետի № 13 (տես Ցուցակ Ձեռագրաց Յակոբ Թօփճեանի. Վաղարշապատ. 1898. Բ. մաս. եր. 30). թուղթ. մի թերթ։ ԳԻՐ. Ընտիր բոլորգիր։ ԳՐԻՉ և ՍՏԱՑՈՂ. Յունան գծող։ ՏԵՂ. Գլաձորի վանք. «ի Զորս Վայոց, ի յանապատիս մեծափառ Գայլիձոր կոչեցեալ, ընդ հովանեաւ սրբոյն Ստեփանոսի Նախավկային և աւգնականութ՚ը մեծ վարժապետիս վերոյասացեալ Եսայեա»։ ԺԱՄԱՆԱԿ. 1334 թ. Փրկչական. «բայց գրեցաւ ի թուի հայոց ի յեթն հարիւրորդի ութսուներորդի երրորդի»։

Բնագիրը մի երես $12^1/_2 \times 8^1/_2$ սմ., մեր նկարը. 10×7 սմ.։

133. Մատ. Ս. Էջմ. № 1619/1622 (Կ. 1581). Շարական, թուղթ. 12,× 8,2 սմ., թերթ 315։ ԳԻՐ. բոլորգիր, միջեան 9,1×5,8 սմ.։ ԳՐԻՉ. Թորոս քահանայ. ՏԵՂ. Աւագ անապատ. «Ընդ հովանեաւ ս՚ը Ա՚ծածնի և կենսակիր ս՚ը Նշանիս». (Սկևռա?)։ ԺԱՄԱՆԱԿ. 1335 թ. Փրկչական. «ի թուիս հայ. ՉՉԵ». տես նկարը (Տախտակ. ՉԴ)։

Նկարուած է 314ᵖ—315ᵐ. իւրաքանչիւր երեսի մեծութիւնը բնագրում 9,1×6 սմ., մեր նկարը 8,2×$5^1/_2$ սմ.։

Լ34, Էջմ. № 3793, 88ᵖ. Տախտ. ՉԱ. 1346 թ։

135. Մատ. Ս. Էջմ. № ? ԳԻՐ. Նոտրգիր անցման (բոլորգրից նոտրի)։ ԳՐԻՉ. «Դաւիթ թղթագիր»։ ԺԱՄԱՆԱԿ. 1447 թ. Փրկչ. «ի մեծ թվին. ՉՂՉ»։

136. Մատ. Ս. Էջմ. № 1403/1380 (Կ. 1367), Պօղոսի թղթոց մեկնութիւն. թուղթ, 11,8×16 սմ., թերթ 343։ ԳԻՐ. բոլորգիր, երկիջեան 17× $5^1/_2$ սմ. իւրաքանչիւրը։ Բուն Ջ-ի գրիչն է Թովմա Մեծոփեցու աշակերտ Ստեփանոս։ ԺԱՄԱՆԱԿ. 1435 թ. «ՊՁԴ»։ ՏԵՂ. Մեծոփայ վանքը։

Մանօր. Ձեռագրիս յիշատակարանները տես Աբարատ 1913 թ. Օգ.— Սեպտ. «Նոր նիւթեր Թովմա Մեծոփեցու կենսագրութեան»։

Նկարուած է Թովմա Մեծոփեցու ինքնաձեռագիր յիշատակարանը 333ᵐ., բնագիրը և մեր նկարը նոյն մեծութեամբ։

137. Մատ. Ս. Էջմ. № 1524/1549. (Կ. 1486) Յիսուս Որդի Շնորհալու, ծաղկագրերով և լուսանցքազարդերով. մագաղաթ. թերթ 279։ ԳԻՐ. Բոլորգիր.։ միջեան 7,1×$4^1/_2$ սմ.։ ԳՐԻՉ. Ստեփանոս Իլովացի. Նկարիչ. «Սիմէօն շնորհազարդ և քաջ բարունի, ծաղկող և կազմող սորին». 276ᵐ.։ ՏԵՂ. Ս. Էջմիածին, Փիլիպպոս կաթուղիկոսի օրով։ ԺԱՄԱՆԱԿ. 1646 թ. Փրկչական. «ՌՂԵ»։ «Ի թուիս հայոց ՌՃԺԱ» նուիրել է գրիչը Իլովայ քաղաքի ս՚ը Ա՚ծածին եկեղեցուն։

Նկարուած է 277ᵖ. բնագիրը և մեր նկարը նոյն մեծութեամբ. 7,1× $4^1/_2$ սմ.։

138. Մատ. Ս. Էջմ. № Գիր. Նոտրագիր։ ԳՐԻՉ. Պետրոս երէց աշակերտ Դարանագցի Գրիգոր վարդապետի։ ՏԵՂ. «Ընդ հովանեաւ ս՚ը